

Ճար չի կար, Յովնան ու փախստեան տեղի չի մնաց. իւր սրտին տրոփիւնն՝ խոսքով որ քովը կեցեր էր կը լսեր որոշ եւ յայտնի, եւ այդ զօրաւոր մարմինը բաբախման հետ կը շարժեր:

Տեսարան մ'էլ Աշոտի վիճակն էր, որ Գուրգէնի կռակը պատսպարան գտեր էր ինքզինքը ծածկելու իշխանուհուն յաջերէն:

Իսկ սա՝ համառօտ եւ քաղցր շնորհակալութիւններ ըրաւ ամէնուն իւրեանց քաջութեան եւ ազնուասրտութեան համար, եւ խնդրեց, որ նոյն շնորհակալութեանց թարգման լինին այն պատուական զօրաց, որ այնչափ գութ եւ եղբայրասիրութիւն ցոյց տուեր էին ջուր ժողաւրդեան, եւ խօսքը վերջացուց ըսելով թէ՝ «Յայ ազգին այսպիսի թշուառ վիճակին մէջ մեծ միտքարութիւն էր տեսնել այնպիսի դիւցազուններ որոնց զինուորական քաջութեան հաւասար էր պատերազմէն վերջ առաքինութիւնն եւ անշահասիրութիւնը»:

Այս խօսքերը զրուցելէն ետքը իշխանուհին ոտք ելաւ, արդէն բացի իրմէ ոչ ոք չէր նստած. «Կը յուսամ, զօրավար Տեարք, որ այս երեկոյ մեր վանքի շնորհակալութիւնն ուզէք պատուել ընթրել յանձն առնելով»— ըսաւ: Եւ քանի մը քայլ առաջ անցնելով, Աշոտի առջեւ կեցաւ.

— Քաջ պատսպարան մը գտեր ես ինքզինքդ ծածկելու համար, Աշոտ իշխան, բայց դարձեալ քու քաջութիւնդ յայտնի ըրած է քեզ ամէնուն, քու երեկուան համբաւդ ինձ հասաւ եւ ուրախացուց եւ ես գոհ եմ, ու խոստմունքիդ դրժող գբեզ չեմ կրնար համարիի

Աշոտ քանի մը խօսք թրթովեց շփոթած, եւ իշխանուհին անցաւ Յովնանու առջեւ կանգնեցաւ. իր լուսավիր հայեցուածքը վսեմ եւ քաղցր այդ մարդուն կրակէ աջերուն վրայ ուղղեցան, որ կարծես թէ թակկացեր էին նոյն միջոցին. հագիւ թէ այդ անխոնջ ծունկերը զինք կը վերցնէին:

— Յովնան զօրավար, զիս չե՞ս ճանչիի: